



Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ



Սամսոնը,
Աստուծոյ
զօրաւոր
մարդը



Written by: Edward Hughes

Illustrated by: Janie Forest

Adapted by: Lyn Doerksen

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org

©2012 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.




Երկար ժամանակ առաջ, Իսրայելի հողին վրայ,
կ'ապրեր մարդ մը, որ Մանուէ կը կոչուէր: Ինքը
եւ իր կինը զաւակներ չունէին: Օրին
մէկը Աստուծոյ հրեշտակը երեւցաւ
Մանուէին տիկնոջ: "Դուն շատ
յատուկ մանուկ մը պիտի
ունենաս", ըսաւ ան:






Ան իր ամուսինին պատմեց այս հրաշալի լուրը:
Մանուէ աղօթեց: "Ով իմ Աստուածս ... նորէն մեզի
եկուր, մեզի սորվեցուր ինչ պիտի ընենք մեր
զաւակին":





Յրեշտակը Մանուէին ըսաւ, որ
մանուկին մազը երբեք պետք չէ
կտրել, գինի պիտի չխմէ եւ որոշ
ուտելիքներ պիտի չուտէ:
Աստուած զատած էր, որ
այս մանուկը դատախագ
ըլլայ: Ան պիտի
առաջնորդէր
Իսրայելը:





Աստուծոյ
ժողովուրդը անշուշտ
օգնութեան պէտք ունէր:
Անոնք Աստուծոյ դուրս ձգէր էին
իրենց կեանքէն, եւ իրենց թշնամիներէն
կ'իշխուէին, պաղեստինցիներէն: Բայց երբ
աղօթեցին Աստուած լռեց: Ան այս մանուկը դրկեց,
որ աշխարհի ամենահզօր մարդը պիտի ըլլար:



"Ուրեմն կինը զաւակ մը ունեցաւ, որուն անունը
Սամսոն կոչեց: Եւ պզտիկը մեծցաւ, եւ Տէրը զինք
օրհնեց: Եւ Տիրոջ Սուրբ Հոգին անոր վրայ սկսաւ
թռչիլ:" Սամսոն շատ

զօրաւոր եղաւ: Օրին
մէկը ան առիւծի մը
հետ կռուեցաւ միայն
իր ձեռքերով եւ
զայն սատկեցուց:





Ժամանակ մը ետք,
Սամսոն մեղր համտեսեց մեղուի
փեթակէ, որոնք սատկած առիւծին
մարմնին մէջ փեթակ շիներ էին:





Ան հանելուկ շինեց:
"Ուտողեն դուրս եկաւ ուտելիք
եւ զօրաւորեն անուշ բան մը":





Որեւէ մէկը
չկրցաւ գիտնալ իմաստը,
բայց Սամսոնին նոր կինը,
պաղեստինցի էր, իր բարեկամին
ըսաւ: Այս Սամսոնին շատ բարկացուց:




Սամսոնին շատ զայրացաւ երբ պաղեստինցիները
իր կնոջ տարին իր ամենամօտ բարեկամին իբր
կին: Ան ուզեց վրեժ լուծել: Բայց ի՞նչպէս: Նախ
Սամսոն 300 աղուէս բռնեց: Ետքը անոնց պոչերը
իրար կապեց, երկու-երկու բռնեց
եւ այրող ջահեր
զետեղեց
անոնց
միջեւ:




Ետքը Սամսոն աղուեսները ազատ արձակեց պաղեստինցիներուն հունձքի


դաշտերուն մէջ:



Հիմա պաղեստինցիք վրեժ լուծել ուզեցին: Սամսոն թոյլ տուաւ, որ զինք բռնեն պաղեստինցիներուն ձեռքով:



Բայց Տիրոջ հոգին եկաւ
Սամսոնին: Ան կապերը
կտրեց, նոր սատկած էշու մը
կզակի ոսկորը առաւ եւ անոր
հետ 1000 թշնամի մեռցուց:




Պաղեստինի խումբերը փնտռտուքի
ելան Սամսոնին: Գիշեր մը, իրեն պաշարեցին
քաղաքի մը մէջ եւ վրան կղպեցին քաղաքի դռները:
Բայց Սամսոն դուրս եկաւ ուսին վրայ շալկելով
քաղաքին դռները:





Սակայն Սամսոն Աստուծոյ
ըսածը չգործադրեց: Աստուած
ուժ տուաւ անոր այնքան ատեն
որ իրեն կը հնազանդէր: Օր մը
Սամսոն իր ուժի գաղտնիքը
տուաւ Դալիլային, որ գեղեցիկ
պաղեստինցի լրտես
էր: Ան մէկը բերաւ
եւ ածիլել տուաւ
Սամսոնի մազը
երբ ան կը
քնանար:





Այդպէ ետք պաղեստինցի
զինուորները յարձակեցան
Սամսոնի վրայ Դալիլային
ննջասենեակին մէջ:
Սամսոն քաջօրէն
պայքարեցաւ, սակայն
իր ուժը գացած էր եւ
իր թշնամիները անոր
աչքերը կտրոցուցին:





Կոյր եւ
տկար, Սամսոն
պաղեստինցիներուն
ծառան դարձաւ:
Անոնք Աստուծոյ
ծառային վրան կը
ծիծաղէին եւ կը
խնդային:




Պաղեստինցիները
տօնակատարութիւն
ունէին: Անոնք փառք
կու տային իրենց ձուկ
չաստուածին, Տակոնին,
որ իրենց յանձնեց
Սամսոնին: Անոնք
կը գինովնային եւ
ուրախութեան մէջ
էին Տակոնի տաճարին
մէջ: Յետոյ Սամսոնի
կանչեցին, որպէսզի
իրենց զբաղեցնէ:




Պզտիկ տղայ մը բերաւ Սամսոնին, եւ
ձգեց, որ յենի տաճարին սիւներէն մէկու մը վրայ:
3000 պաղեստինցիներ տանիքն էին եւ շատ աւելի

տաճարին
մէջ, ամէնքն
ալ կը
ծիծաղէին
Սամսոնի
վրայ:



Սակայն Սամսոնի մազը սկսաւ երկարիլ
բանտին մէջ: Հիմա ան աղօթեց. "Ով Տէր Աստուած,
զօրացուր ինձի միայն այս անգամ, որպէսզի

վրէժա լուծեմ
իմ երկու
աչքերս
կորսնցնելուն
համար":





Աստուած անգամ եւ
եւս Սամսոնին ուժ կու
տար կրնա՞ր Սամսոն
անկարելին ընել:
Այո՛, այո՛, քաշքշելով
Սամսոն սիւները
իրարմէ անջատեց
Տակոնի տաճարը
փուլ եկաւ եւ
կործանեցաւ
մեռցնելով
հազարաւոր
պաղեստինցիներ
եւ Սամսոնը:



Սամսոնը, Աստուծոյ զօրաւոր մարդը:

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Դատաւորաց 13-16

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք գինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք Ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

